ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5

NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

HAIA-5

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ХАИА-5

YEREVAN
IAE PUBLICATION 2023

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2023

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԻԱ – 5

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5

ԵՐԵՒԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Published by decision of the Scientific Council of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ *Արսեն Բոբոխյան*

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ *Տորք Դալալյան*

Խմբագրակազմ՝ *Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Ջուստո Թրաինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատուրեան, Ռուբեն Կարապետյան, Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան, Հարություն Մարության, Համլետ Պետրոսյան, Գագիկ Սարգսյան, Ադամ Սմիթ, Նվարդ Վարդանյան* (պատասխանատու խմբագիր), *Պատրիկ Տօնապետեան, Պիտեր Քաուի*

Editorial Board

Editor-in-Cief: *Arsen Bobokhyan*

Vice-Editor-in-Chief: *Tork Dalalyan*

Editorial Stuff: *Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Harutyun Marutyan, Hamlet Petrosyan, Gagik Sargsyan, Adam Smith, Giusto Traina, Nvard Vardanyan* (Managing editor)

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 5-րդ հատորն ընդգրկում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, Հայաստանի պատմության թանգարանի, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի և այլ հիմնարկների հետազոտողների գիտական հոդվածներ, որոնք վերաբերում են հնագիտության, ազգագրության, մշակութային մարդաբանության և բանագիտության՝ մինչ օրս չլուսաբանված զանազան հիմնախնդիրների քննությանը: Որոշ հոդվածներ ունեն միջգիտակարգային բնույթ և շոշափում են նաև լեզվաբանական, արվեստաբանական հարցադրումներ: Համարն ընդգրկում է նաև գիտական հաղորդումներ և հոբելյանական հոդված:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ԵՒ ԳՏԱԾՈՆԵՐ 7

Բենիկ Վարդանյան
Կուր-արաքսյան միջագետքի բրոնզ-երկաթեդարյան կեռերը 8

Հենրիկ Դանիելյան
«Կիկլոպյան» ամրոցների ֆենոմենը՝
Արագածի հարավային լանջերի ամրոցների օրինակով 26

Լևոն Մկրտչյան
Արարատյան դաշտի հյուսիսում գտնվող աշտարակատիպ կառույցները 37

Արմինե Գաբրիելյան
Արցախի Տիգրանակերտի անտիկ դրոշմազարդ խեցեղենը 45

Ռուզան Փալանջյան
Անտիկ ժամանակաշրջանի գինեգործությանն առնչվող
հնագիտական գտածոներ Վայոց ձորից 57

Դիանա Միրիջանյան
Հայաստանի միջնադարյան քարե տապանները 66

Արսեն Հարությունյան
Տաթևի մեծ անապատի վիմագրական ժառանգությունը 76

II. ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 95

Նվարդ Վարդանյան
Ավելը (ցախավելը) ծիսահավատալիքային համատեքստում.
ավանդույթի հարատևումը մեր օրերում 96

Սմբատ Հակոբյան
Մահը հայկական ֆեյսբուքում.
ավանդական, մոդեռն, թե պոստմոդեռն սուգ 109

III. ՊԱՐ ԵՒ ԾԵՍ 123

Նարինե Շամամյան
Պարերը Վայոց ձորի հարսանեկան արարողություններում
(ավանդույթ և արդիականություն) 124

Հայարփի Մնանյան
Իրանահայերի չուբբազի (փայտախաղ) և դաստմալբազի
(թաշկինակներով պար) պարերը ծիսական և կենցաղային միջավայրում 137

IV. ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒՅԹ 149

Սամվել Ռամազյան
Քաչալ Համզա. ընդհանուր կերպար հայկական և թյուրքական էպոսներում 150

Հասմիկ Մարիկյան
Օրորոցի լեզվամշակութային դրսևորումները հայ իրականության մեջ (անգլալեզու նյութի համադրմամբ) 172

Լուսինե Անգելուշ
Երևան քաղաքի ուսանողության լեզվական վարքագիծը և միջմշակութային հաղորդակցումը 182

V. ՊՈԼՍԱՀԱՅՈՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 195

Սալվինե Մարկոսյան
Ներհակությունները պոլսահայ համայնքում. արևմտահայերի ազգային սահմանադրության հաստատման շուրջ (1856–1863 թթ.) 196

VI. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ 207

Մարիամ Մարիբեկյան
Հառիճի հնագիտական հուշարձանի ուսումնասիրության պատմությունից 208

Յարութիւն Խաչատուրեան
Խաչքարերի ուսումնասիրության մեթոդաբանական ակնարկ 214

VII. ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ 225

Արման Մալոյան
Հակոբ Չոլաքյան - 75 226

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ ԵՒ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ 233

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 276

V

ՊՈԼՍԱՀԱՅՈՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

DOI:10.54503/2953-805X-2023.5-196

Սալվինե Մարկոսյան
ՀԱԻ

ՆԵՐՀԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊՈԼՍԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ. ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՇՈՒՐՋ (1856–1863 ԹԹ.)

19-րդ դ. երկրորդ կեսի օսմանյան Թուրքիայի քաղաքական ու տնտեսական զարգացումների պատմությունը բազմիցս առնչվում է արևմտահայության սոցիալ-քաղաքական և իրավական իրականությանը: Ըստ էության, մենք գործ ունենք հպատակ ժողովուրդների հանդեպ կիրառած քաղաքականության զարգացումների հետ:

Սույն հոդվածում քննարկվում և վերլուծվում են 1856–1863 թթ. արևմտահայերի Ազգային սահմանադրության հաստատման շուրջ մղվող պայքարի պատճառները: Մասնավորապես փորձ է արվել այս հիմնախնդիրը լուսաբանել Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող սոցիալական փոփոխությունների համատեքստում:

Փորձել ենք ցույց տալ, որ սահմանադրական շրջանը ազգային զարգացման և առաջադիմության ժամանակահատված էր, քանի որ սահմանադրություն ունենալու համար մղված պայքարի տարիները նշանակալից են այն բանով, որ ազատագրական գաղափարների տարածումը, ազգային ինքնագիտակցության զարգացումը դառնում է ժամանակի հայ հասարակական-քաղաքական կյանքի կարևոր ձեռքբերումներից մեկը:

Պետք է ընդգծել, որ սահմանադրությունը հայ հասարակական միտքը հարստացնում էր ազգային ինքնորոշման բովանդակությամբ, և հայ համայնքը կազմակերպված ձևով գնում էր դեպի իր ներքին կյանքի կառավարումը:

Հիմնաբառեր՝ օսմանյան Թուրքիա, բարենորոգումներ, արևմտահայություն, Ազգային սահմանադրություն, սահմանադրական շարժում, սահմանադրականներ, հակասահմանադրականներ, ամիրայություն, հոգևորականություն:

Ներածականի փոխարեն

Օսմանյան Թուրքիայում 1856 թ. փետրվարի 18-ին սկսվեց բարեփոխումների երկրորդ փուլը[1], որի մեկնարկը տրվեց հրապարակած Հաթթը հյումայունը՝ բարեկարգումների հրովարտակը:

Հաթթը հյումայունով Օսմանյան կայսրությունը ձգտում էր Փարիզի դաշնագրի (1856 թ. մարտի 30) կնքման նախօրյակին համաշխարհային հասարակությանը ցույց տալ, որ կարող է լուծել իր երկրի բարեփոխումների խնդիրը: Այս դաշնագրով օսմանյան Թուրքիան դասվում էր քաղաքակիրթ պետություն-

[1] Օսմանյան Թուրքիայում բարեփոխումների (թանզիմաթի) ժամանակաշրջանը ընդգրկում է երկու փուլ՝ 1839–1856 և 1856–1876 թթ.: Առաջին փուլը սկսվում է 1839 թ. նոյեմբերի 3-ին հրապարակված Գյուլհանեի Հաթթը շերիֆով (Վարդաստանի հրովարտակ): Այս մասին հանգամանորեն տես Shaw 1977:

ների շարքը, ինչի արդյունքում նրանից պահանջվում էր բարենորոգել իր երկիրը՝ բոլոր հպատակներին անխտիր շնորհելով հավասարություն և հոգալ նրանց բարօրության մասին:

Պետք է ընդգծել այն հանգամանքը, որ Հաթթի դրույթների մեջ կարևոր տեղ էին զբաղեցնում այն միջոցառումները, «որոնք ուղղված էին *միլլեթների* փոխակերպմանը զուտ կրոնական ինստիտուտների՝ քաղաքացիական կառավարման բնագավառում նրանց ավանդական արտոնությունների վերացման միջոցով»[2]:

Այս հրովարտակի շատ կետեր, մասնավորապես հպատակ ժողովուրդներին առնչվող, հիմնականում գործնական կիրառություն չգտան և մնացին թղթի վրա, քանի որ օսմանյան ավանդական հասարակությունը ի վիճակի չէր յուրացնելու այդ բարեփոխումները:

Ազգային սահմանադրության մշակման հանգամանքները

Ի սկզբանե ակնհայտ էր, որ 1856 թ. հրապարակված հրովարտակով օսմանյան Թուրքիան ձգտում էր կանխել հպատակ ազգերի ազատագրական պայքարը և ազգային ինքնորոշման տրամադրությունների զարգացումը՝ միաժամանակ փորձելով զերծ մնալ իր ներքին գործերին այլ պետությունների միջամտությունից, հաղորդելով դաշնագիրը ստորագրող երկրներին, որ հրովարտակը «սուլթանի արքայական կամքի ինքնաբուխ արտահայտությունն է»[3]: Այս պարագայում շեշտվում էր, որ հրովարտակը հիմք պիտի ծառայի թուրքական կառավարության և հպատակների փոխհարաբերությունների կարգավորման համար[4]:

Ինչպես վերը նշվեց, ըստ Փարիզի պայմանագրի, Բ. դուռը պարտավորվում էր բարեփոխումներ իրականացնել համայնքներում (հայ, հույն, հրեա)՝ ապահովելով համայնքային վարչությունների գործունեության ազատությունը:

Այս պարտավորությունների շրջանակում 1856 թ. դեկտեմբերին հայ համայնքի Ազգային վարչության կանոնադրություն մշակելու համար երկու հանձնաժողով է ստեղծվում: Մեկն առաջադրվում է Բ. դռան կողմից, իսկ մյուսը՝ ազգի կողմից: Այս երկու հանձնաժողովների աշխատանքի արդյունքում 1857 թ. խմբագրվում է «Հայ համայնքի կանոնադրությունը» (Nizamnamei Milleti Ermeniyan)[5], իսկ արդեն 1859 թ. դեկտեմբերին այն քննության է առնվում Հոգևոր և Գերագույն ժողովների կողմից:

---

2 Сафрастян 1985, 50.

3 Kaya 2004, 86. Փաստերը ցույց են տալիս, որ թանզիմաթի տարիներին Բ. դռան քաղաքականությունը ազգային հարցում, չնայած կառավարական ակտերում մի շարք առաջադեմ դրույթների հայտարարմանը, բնորոշվում էր նրա մեջ հետադիմական, հակազգային, ճնշողական միտումների ուժեղացմամբ: Այս պարագայում դժվար է անվերապահորեն պնդել, որ թանզիմաթական նորամուծությունները առաջադիմական էին, եթե դրանք ուղղված էին քրիստոնյա ժողովուրդների ազգային ոգու ճնշմանը [տես Սաֆրաստյան 2009, 72]:

4 Սարուխան 1912, 12:

5 Uras 1950, 159:

Սակայն, 1859 թ. դեկտեմբերի 18–25-ը սահմանադրության հակառակորդները Գևորգ պատրիարքի հետ ձգձգում էին դրա ընդունումը: Ժողովուրդը պահանջում է պատրիարքի հրաժարականը և հակասահմանադրական ամիրաների կամակատար պատրիարքը հրաժարական է տալիս: Մայիսի 2-ին ընտրվում է նոր պատրիարքը՝ Սարգիս Գույումճյանը[6]:

Հոգևորականության և ամիրայության ընդդիմությունը սահմանադրության վավերացման դեմ

1860 թ. մայիսի 24-ին կանոնադրությունը վավերացվում է[7] և Ն. Ռուսինյանի կողմից ստանում Ազգային սահմանադրություն անվանումը[8]: Ազգային սահմանադրության հեղինակներն էին Ն. Ռուսինյանը, Սերվիչեն, Գր. Օտյանը և Ն. Պալյանը[9]:

Կանոնադրությունը կազմված էր ժողովրդավարական ոգով և առաջադիմական ձգտումներով. «Բայց հազիվ քանի մը ամիս կանցնի, և ահա ամիրաներու խումբ մը, իրենց հետ ունենալով մաս մը կղերական դասեն, այն կանոնադրությունը անհարմար կտեսնեն ազգին, կրոնքի և ազգային ավանդությանց հակառակ բաներ անոր մեջ տեսնել կկարծեն»[10]:

Հատկանշական է, որ սահմանադրությունից խորապես դժգոհ էր հայ բարձրաստիճան եկեղեցականությունը, որը զրկվել էր գավառներում և թաղերում պատկառելի եկամուտներից կամ դրանք տնօրինելու հնարավորությունից: Եվ պատահական չէ, որ սահմանադրության դեմ ամբարած իր դժգոհությունն արտահայտելու համար ամիրայական ու կրոնական պահպանողականությունը ելք առաջ բերեց ազգային ավանդույթների պաշտպանության կարգախոսով[11]:

1860 թ. օգոստոսի 25-ին գումարվում է սահմանադրական առաջին Ընդհանուր ժողովը: Այս ժողովին մասնակցում էին 180 երեսփոխաններ, որոնցից ընտրված էին 120-ը, իսկ 60-ը անդամակիցներ էին (որ ենթադրվում էր սահմանադրության 9-րդ հոդվածով՝ մտավորականներ և պաշտոնյա հայեր)[12]: Փաս-

6 Գրիգորյան 2004, 55–56:

7 Убичини 1877, 177: Սահմանադրությունը տե՛ս «Ազգային սահմանադրութիւն հայոց», 1860: Օսմանյան Թուրքիայում հունական համայնքի կանոնադրությունը հաստատվել է 1861 թ. ապրիլի 25-ին, իսկ հրեական համայնքինը՝ 1865 թ. մարտի 19-ին: Համայնքների վերակազմավորման գործընթացների մասին մանրամասն տե՛ս Davison 1963, 114–135:

8 Ղազարյան 1967, 456: Ուշագրավ է այն հանգամանքը, որ հետագայում թուրքական և արևմտյան որոշ պատմաբաններ կառչեցին արևմտահայերին տրված այդ կանոնադրության «սահմանադրություն» անվանը. նրանք տարածում են այն պաշտոնական կեղծիքը, թե «իբր բարեխնամ սուլթանը արևմտահայերին սահմանադրություն է շնորհել դեռևս 1860 թ., բուրժուական մի ազատություն, որից ինքը՝ թուրք ժողովուրդը զուրկ էր մինչև 1876 թ. (օսմանյան առաջին սահմանադրությունը)»: Սակայն պետք է փաստել, որ թուրքերեն տեքստում այն կոչվել է «nizamname» այսինքն՝ կանոնադրություն [Հարությունյան 2009, 67–68]:

9 Artinian 2004, 99.

10 Ղազարյան 1967, 455:

11 Խառատյան 2008, 84:

12 Боджолян 1992, 86:

տորեն հայ համայնքում ընտրովի սահմանադրական վարչությունը իրավականորեն ամրապնդում էր ամիրայության ազդեցության կորուստը:

Այս դասերի ընդդիմության արդյունքը եղավ այն, որ կարողացան թուրքական կառավարության ձեռքով խափանել սահմանադրության գործադրումը: Բ. դուռը, չհանդուրժելով աշխարհիկ վարչությանը տրված լայն լիազորությունները, սահմանադրությունն առանց վավերացնելու վերադարձրեց հայ համայնքին:

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել, որ Ազգային սահմանադրությունը սահմանափակում էր արևմտահայ կղերաամիրայական վերնաշերտի հնամենի իշխանությունը: Հայ համայնքում հասարակական-վարչական գործերի ղեկն անցնում էր հասարակական կշիռ և ազդեցություն նվաճած բուրժուազիային: Բ. դռան կենտրոնաձիգ քաղաքականությունը որոշ իմաստով դյուրացնում էր առևտրական բուրժուազիայի այդ վերելքը: Հաթթը հյումայունը վերացնում էր ամիրաների և հոգևոր վերնախավի՝ հարկեր գանձելու իրավունքը, ինչպես նաև՝ կղերին տրամադրվող զուտ կրոնական հարկերը: Բարձրաստիճան հոգևորականներին նշանակվում էր պետական թոշակ, վերացվում էր վիճակների առաջնորդությունը վաճառելու սովորությունը, որ գործողության ազատություն էր ապահովում եկեղեցու գլխավորների համար և նրանց շնորհում եկամտի պատկառելի աղբյուրներ:

Իրավական բնագավառում դա ձևակերպվում էր նրանով, որ պատրիարքի և ամիրաների կամքը փոխարինվում էր ընտրովի կրոնական ու քաղաքացիական ժողովներով[13]:

Սահմանադրական շաժումը

1860 թ. կանոնադրության հռչակումը չկանխեց հակասահմանադրական պայքարը, ընդհակառակը, սահմանադրականների դեմ նրանք պայքարի ելան՝ Երուսաղեմի պատրիարքական ընտրության առիթն օգտագործելով: Բանն այն է, որ Կ. Պոլսի Ազգային վարչությունը մշակել էր Երուսաղեմի Ս. Հակոբյաց վանքի կանոնադրությունը[14], ըստ որի պատրիարք կարող էր ընտրվել և՛ այդ վանքի միաբանության ներսից, և՛ դրսից՝ միաբանության մաս չկազմող Առաքելական եկեղեցու այլ ներկայացուցիչներից: Այս առիթով ծայր է առնում այսպես կոչված «ներսէն-դուրսէն» պայքարը «խավարյալների» և «լուսավորյալների» միջև[15]: Սահմանադրականները «դրսէնականներն» էին, հակասահմանադրականները՝ «ներսէնականները». «Արդէն Սահմանադրութեան կազմուելուն ատենէն երկունքի բաժնուած էր հանրութիւնը, որչափ ալ երկու կողմերն ալ ազգային կանոնադրութիւն մը կուզէին ունենալ, սակայն եւրոպական կրթութեամբ կամ շփմամբ յառաջ եկածներ հետամուտ էին բուռն և ընդարձակ ազատական ձևերու, մինչ տեղական և աւանդական գաղափարներով սնածներ կը սիրէին ազատութեան չափաւոր կիրառութիւնը»[16]:

---

13 Խառատյան 1980, 35:

14 Երուսաղեմի վանքի կանոնադրության ընդունման մասին տես Մեղու, 1861, 41–45:

15 Սիրունի 1987, 59–60:

16 Սիրունի 1987, 61:

Նշենք, որ հակասահմանադրականներին է միանում նաև Սարգիս պատրիարքը, որի ջանքերով խափանվում է Երուսաղեմի պատրիարքի ընտրությունը: Գաղտնիք չէ, որ պատրիարքը իր շահերն էր հետապնդում այս գործում, ամենակարևորն այն էր, որ սահմանադրությունը՝ որպես աշխարհականացած հայ համայնքի կանոնադրություն, նրան զրկում էր պոլսահայ համայնքի վրա որևէ ազդեցություն ունենալու հնարավորությունից:

Ներքին հակասությունների այս պայմաններում, ինչպես և կանոնադրության՝ դեռևս վավերացված չլինելու փաստից ելնելով՝ Բ. դուռը պահանջեց դադարեցնել նրա գործադրումը:

Այսպիսով, Երուսաղեմի պատրիարքի ընտրության պատրվակով՝ խավարյալները, փաստորեն, հասան իրենց նպատակին. սահմանադրությունն արգելվեց: Պատրիարքը հրաժարական տվեց, Ազգային ժողովը և վարչությունը լուծարվեցին (1861 թ. հոկտեմբերի 17-ին)[17]: Դրանից հետո սահմանադրության վերաքննության համար կառավարությունը կազմեց նոր հանձնաժողով:

1862 թ. փետրվարին այս հանձնաժողովը խմբագրեց և փոփոխություններ մտցրեց սահմանադրության նոր տեքստում: Դրան հետևեց, դարձյալ Բ. դռան հրահանգով, Ընդհանուր ժողովի կողմից ստեղծված մի նոր հանձնաժողով, որին անդամակցում էին Գր. Օտյանը, Մ. Աղաթոնը, Ն. Ռուսինյանը, Ստ. Ասլանյանը, Հ. Սուրենյանը, Մ. Մինասյանը և Մ. Մանուկյանը[18]: Այս երկու հանձնաժողովների համատեղ աշխատանքի շնորհիվ պատրաստվեց սահմանադրության նոր տեքստ, որը ներկայացվեց կառավարության վավերացմանը:

Սահմանադրության հաստատման շուրջ պոլսահայության պայքարը, սակայն, դեռևս չէր ավարտվել ո՛չ Կ. Պոլսում, ո՛չ էլ Երուսաղեմում: Բ. դուռն իր հերթին չէր շտապում վավերացնել նոր սահմանադրությունը, մինչև որ սկսվեցին նոր հուզումներ: 1862 թ. օգոստոսի 1-ին Խառը ժողովին ներկայացավ սահմանադրականների պատվիրակությունը՝ սահմանադրության վավերացումը Բ. դռնից պահանջելու և դրա գործողությունը վերսկսելու պնդումներով: Ի պատասխան Խառը ժողովի ատենապետ Բարունակ Ֆերուհխանի (Քրթիկյան) հանդիմանությունների՝ ժողովուրդը ներխուժեց պատրիարքարան, ուժով դուրս հանեց այդ ժողովի անդամներին, ապա փակելով պատրիարքարանի դռները՝ ցրվեց[19]:

Ժողովրդի սահմանադրական և հակասահմանադրական խմբերի միջև փողոցային կռիվներն ու ընդհարումները շարունակվում էին դրանից հետո ևս, մինչև որ օգոստոսի 9-ին Բ. դուռը ոստիկանական զորաջոկատի միջոցով վերահաստատեց կարգուկանոնը և ժամանակավոր Խառը ժողովի իրավասությունները[20]:

---

17 Տես Bebiroghlu 2003, 75:

18 Մեղու 1862, № 153, 33–34:

19 Խառատյան 2008, 86:

20 Մեղու 1862, № 169, 169–170:

Ազգային սահմանադրության նշանակության շուրջ

1863 թ. մարտի 17-ին կառավարությունը վավերացրեց սահմանադրությունը[21]: Դրա շուրջ պայքարը, սակայն, շարունակվեց հասարակական հոսանքների սուր հակադրության պայմաններում[22]:

Խոսելով սահմանադրության առաջադիմական արժեքի մասին՝ պետք է ընդգծել, որ այն հնարավորություն էր ստեղծում ազգային-վարչական ամբողջության մեջ, թեկուզ և թույլ կապերով, միավորել արևմտահայ զանգվածներին՝ գավառը կենտրոնի հետ, և խթանել նրանց հասարակական զարգացումը:

Սահմանադրությունը պետք է դիտարկել որպես ժողովրդի երկարատև պայքարի արդյունք, ազգային ինքնագիտակցության հասնելուն ուղղված նրա պայքարի անհրաժեշտ մի փուլը[23]:

Պետք է փաստել, որ կառավարության վերաբերմունքը սահմանադրության նկատմամբ միշտ էլ թշնամական է եղել, քանի որ սուլթանական իշխանությունը չէր կարող հանդուրժել դեմոկրատական հիմքով գրված կանոնադրությունը:

Վերը բերված փաստերի վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ սահմանադրությունը հայ հասարակական միտքը հարստացնում էր ազգային ինքնորոշման բովանդակությամբ և միավորում բռնակալությունը մերժելու գաղափարով:

Թեև իր կիրառական նշանակությամբ նշված փաստաթուղթը պարզապես կանոնադրություն էր, որը կարգավորում էր հայ համայնքի մշակութային, հասարակական և կրոնական գործերը, այդուհանդերձ, դրա շնորհիվ համայնքը կազմակերպված ձևով ձգտում էր կառավարել իր ներքին կյանքը:

Եզրահանգումներ

Օսմանյան Թուրքիայում սահմանադրական շարժումը պայմանավորված էր այդ երկրի սոցիալական և քաղաքական կացությամբ և կրում էր տվյալ ժամանակաշրջանի ազդեցությունը: Սահմանադրական շարժումը նոր տիպի շարժում էր ոչ միայն հայերի, այլև օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ գտնվող մյուս ազգերի համար:

Սահմանադրական շարժման և դրա արդյունք հանդիսացող սահմանադրության հաստատման միջոցով ժողովրդի մեջ արթնացավ ինքնուրույն պետություն ունենալու զգացումը, այն նպաստեց ազգային ինքնագիտակցության զարգացմանը:

Ազգային սահմանադրությունն արժանացել է տարաբնույթ գնահատականների, իսկ սահմանադրության համար մղվող պայքարն իր բուռն արտահայտությունն է գտել հայ պարբերական մամուլի էջերում: Հասարակական

---

21 Bebiroghlu 2003, 76: Սահմանադրությունը տես «Ազգային սահմանադրութիւն հայոց» 1863:

22 Չատինյան 2015, 44:

23 Խառատյան 1980, 36:

տարբեր հակադիր ու իրարամերժ հոսանքների պատկանող մտավորականները յուրովի են փորձել գնահատել այն:

Հարկ է նկատել, որ սահմանադրության ուսումնասիրությունը կարևորվում է այդ ժամանակաշրջանի հայության իրավական ու քաղաքական կացությունը արժևորելու տեսակետից:

Այսպիսով, կարող ենք շեշտել այն հանգամանքը, որ օսմանյան Թուրքիայում բարեփոխումներ անցկացնելուն ուղղված եվրոպական քաղաքականությունը հակադրվում էր հպատակ ժողովուրդների ազգային ինքնորոշման տրամադրությունների զարգացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սկզբնաղբյուրներ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ 1860
Ազգային սահմանադրութիւն հայոց, Կ. Պոլիս, տպ. Սուրբ Փրկչի, 1860:

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ 1863
Ազգային սահմանադրութիւն հայոց, Կ. Պոլիս, տպ. Միւիէնտսեան, 1863:

ՄԵՂՈՒ 1861
Մեղու, Կ. Պոլիս, 1861, №125, փետրվարի 20:

ՄԵՂՈՒ 1862
Մեղու, Կ. Պոլիս, 1862, №153, փետրվարի 20:

ՄԵՂՈՒ 1862
Մեղու, Կ. Պոլիս, 1862, №169, օգոստոսի 1:

Ուսումնասիրություններ

ԳՐԻԳՈՐՅԱՆ 2004
Գրիգորյան Գ., Ազգային սահմանադրություն հայոց, Երևան, «Եգեա», 2004:

ԽԱՌԱՏՅԱՆ 1980
Խառատյան Ա.Ա., Արևմտահայ հասարակական մտքի և հրապարակախոսության պատմությունից, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980:

ԽԱՌԱՏՅԱՆ 2008
Խառատյան Ա.Ա., Դարձյալ արևմտահայերի սահմանադրության մասին // Պատմա-բանասիրական հանդես, 2008, №2, էջ 81–93:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 2009
Հարությունյան Գ., Արևմտահայության կացությունը և հայկական հարցի միջազգայնացումը (1850–1870-ական թթ.), Երևան, «Էդիթ պրինտ», 2009:

ՂԱԶԱՐՅԱՆ 1967
Ղազարյան Հ.Մ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800–1870 թթ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967:

ՉԱՏԻՆՅԱՆ 2015
Չատինյան Գ.Ե., Հայ հասարակական միտքը Օսմանյան բարենորոգչական շարժման մասին (1839–1876), թեկն. ատեն., Է.00.01, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Երևան, 2015:

ՍԱՐՈՒԽԱՆ 1912
Սարուխան Ա., Հայկական խնդիրն և ազգային սահմանադրութիւնը Թիւրքիայում (1860–1910) Թիֆլիս, «Էպօխա», 1912:

ՍԱՖՐԱՍՏՅԱՆ 2009
Սաֆրաստյան Ռ. Ա., Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876–1920 թթ.), Երևան, «Լուսակն», 2009:

ՍԻՐՈՒՆԻ 1987
Սիրունի Յ. Ճ., Պոլիս եւ իր դերը, հ. 3, Անթիլիաս-Լիբանան, Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ տպ., 1987:

БОДЖОЛЯН 1992
Боджолян М. Т., Танзимат и Западная Армения, Ереван, АН Армении, Ин-т востоковедения, 1992.

САФРАСТЯН 1985
Сафрастян Р. А., Доктрина османизма в политической жизни Османской империи (50–70 гг. XIX в.) Ереван, Изд-во АН Арм ССР, 1985.

УБИЧИНИ 1877
Убичини А., Современное состояние Отоманской империи: Статистика, правление, администрация, финансы, армия, общины не-мусульманские и пр. :По официальному ежегоднику на 1875–76 г. (Салнаме на 1293 г. Хиджры) и по другим новейшим документам, С. Петербург, О. И. Бакста, 1877.

DAVISON 1963
Davison R. H., Reform in the Ottoman Empire 1856–1876, Princeton, Princeton University Press, 1963.

SHAW 1977
Shaw S. J., Shaw E. K., History of the Ottoman Empire and Modern Turkey, V. 2, Reform, Revolution, and Republic: The Rise of Modern Turkey, 1808–1975, London, New York, Melbourne, Cambridge University Press, 1977.

ARTINIAN 2004
Artinian V., Osmanli devleti'nde Ermeni Anayasasi'nin dogusu, 1839–1863, Istanbul, Aras 2004 (Օսմանյան պետությունում հայկական սահմանադրության ծնունդը):

BEBIROGHLU 2003
Bebiroghlu M., Tanzimattan II. Meshrutiyete Ermeni nizamnameleri, Istanbul, M. Bebiroghlu, (Bebiroğlu M., Tanzimat'tan II. Meşrutiyet'e Ermeni nizamnameleri, Istanbul, M. Bebiroğlu), 2003 (Թանզիմաթից մինչև երկրորդ Սահմանադրության կառավարման ժամանակաշրջան. Հայոց կանոնադրությունները):

KAYA 2004
Kaya Ö., Tanzimat'tan Lozan'a azinliklar, Istanbul, Yeditere Yayn, 2004 (Թանզիմաթից Լոզան. Փոքրամասնություններ):

URAS 1950
Uras E., Tarihte Ermeniler ve Ermeni Meselesi, Ankara, 1950, Türk tarih Basimevi (Հայերը պատմության մեջ և Հայկական հարցը):

Salvine H. Markosyan
Institute of Archaeology and Ethnography

CONTRADICTIONS AMONG ARMENIANS OF CONSTANTINOPLE OVER THE APPROVAL OF THE WESTERN ARMENIANS' NATIONAL CONSTITUTION (1856–1863)

Keywords: Ottoman Turkey, reformations, Western Armenians, national constitution, constitutional movement, constitutionals, anti-constitutionals, amirs, ecclesiastics.

The history of political and economic developments in Ottoman Turkey in the second half of the 19th century is closely linked to the sociopolitical and legal life of Western Armenians, as we are, in fact, dealing with the unfolding of policies towards subjugated peoples.

This article discusses and analyzes the reasons behind the movement for the establishment of the National Constitution of Western Armenians of 1856–1863. This article attempts to investigate this issue in the context of social changes in the Ottoman Empire.

We aim to show that the constitutional period was a period of national development and progress, as the years of struggle to have a constitution are significant in that the advancement of liberation ideas and the development of national self-consciousness become one of the important achievements of the Armenian social and political life.

It is important to state that the constitution enriched the Armenian mentality with the understanding of national self-determination, and the Armenian community moved towards the management of its internal life in an organized way.

Hence, we can emphasize the fact that the European policy aimed at carrying out reforms in Ottoman Turkey contradicted the advancement of ideas of national self-determination among non-Muslim peoples.

Салвине Акоповна Маркосян
Институт археологии и этнографии

РАЗНОГЛАСИЯ В АРМЯНСКОЙ ОБЩИНЕ КОНСТАНТИНОПОЛЯ ПО ПОВОДУ УТВЕРЖДЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ КОНСТИТУЦИИ ЗАПАДНЫХ АРМЯН (1856–1863 ГГ.)

Ключевые слова: Османская Турция, реформы, западные армяне, Национальная конституция, конституционное движение, конституционалисты, антиконституционалисты, амиры, духовенство.

Политическая и экономическая история Османской Турции во второй половине 19-го века тесно связана с социально-политической и правовой реальностью западных армян, потому что, по сути, мы имеем дело с развитием политики в отношении подданных народов.

В данной статье мы рассматриваем и анализируем причины борьбы за создание Национальной конституции западных армян в 1856–1863 годах. Пред-

принимались попытки осветить эту проблему в контексте социальных изменений, происходящих в Османской империи.

Мы попытались показать, что конституционный период был периодом национального развития и прогресса, поскольку годы борьбы за конституцию имеют большое значение в том смысле, что распространение идей освобождения и развитие национального самосознания становятся одним из важных достижений общественной и политической жизни армян.

Важно отметить, что конституция обогатила общественный разум армян содержанием национального самоопределения, и армянская община организованно шла к управлению своей внутренней жизни.

Таким образом, мы можем подчеркнуть тот факт, что европейская политика, направленная на проведение реформ Османской Турции, была против развития настроения национального самоопределения немусульманских народов.

Ներկայացվել է՝ 15.02.2022,
գրախոսվել է՝ 25.02.2022,
ընդունվել է տպագրության՝ 01.05.2023:

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
5

Սրբագրիչ՝ Անժելա Ամիրխանյան
Ռուսերենի և անգլերենի սրբագրիչ՝ Դիանա Ջարդարյան
Ձևավորում և էջադրում՝ Արտակ Հարությունյան

Տպագրվել է «Հովսեփյան» ՍՊԸ տպարանում
հեռ. 043 107 090
hovsepyanprint@gmail.com

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Անանյան Հայարփի Գուրգենի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արխիվի և արխիվի մշակման գ/հ խմբի ավագ լաբորանտ
ananyanhg@gmail.com

Անգելուշ Լուսինե Միքայելի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Էթնոսոցիոլոգիայի բաժնի ավագ լաբորանտ
lusineangelush@gmail.com

Գաբրիելյան Արմինե Արարատի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին հնագիտության բաժնի գիտաշխատող
arminegabriel.iae@gmail.com

Դանիելյան Հենրիկ Ավագի
«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի գիտաշխատող
henrikh.danielyan@gmail.com

Խաչատուրեան Յարութիւն Բիւզանդի
Ճարտարագետ, անկախ հետազոտող, Փարիզ
ha.khatchadourian@free.fr

Հակոբյան Սմբատ Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի գիտաշխատող
smbat.hakobian@gmail.com

Հարությունյան Արսեն Էդուարդի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վիմագրագիտության բաժնի վարիչ / Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող
ars.vimagraget@gmail.com

Մալոյան Արման Մանուկի
պատմական գիտությունների թեկնածու
«ԿԶՆԱԿ» հիմնադրամի՝ վերապատրաստման ծրագրերի, մշակման և վերապատրաստումների արդյունավետության գնահատման բաժնի պետ
armanmaloyan@mail.ru

Մատիկյան Հասմիկ Համլետի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող / Շիրակի պետական համալսարանի դասախոս
hasvrej@mail.ru

Մարկոսյան Սալվինե Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրությունների բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Միրիջանյան Դիաննա Հրաչյայի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Միջնադարյան Հայաստանի հնագիտության բաժնի գիտաշխատող
dianamirijanyan@gmail.com

Մկրտչյան Լևոն Ալբերտի
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի կրտսեր գիտաշխատող / «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահապանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ
levoncultur@gmail.com

Շամամյան Նարինե Ալբերտի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազագրության ինստիտուտի Ազգագրության բաժնի գիտաշխատող
dancenano@mail.ru

Ռամազյան Սամվել Մարտունի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող
sramaz@mail.com

Սարիբեկյան Մարիամ Գրիգորի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վաղ հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող / Հայաստանի պատմության թանգարանի ֆոնդապահ
mariamgsaribekyan@gmail.com

Վարդանյան Բենիկ Վարդանի
Հայաստանի պատմության թանգարանի գիտաշխատող
vbenik@yahoo.com

Վարդանյան Նվարդ Խաչատուրի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի ավագ գիտաշխատող / Երևանի պետական համալսարանի դոցենտ
nvardv@yahoo.com

Փալանջյան Ռուզան Սուրենի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող
ruzanpal@gmail.com

ՀԱԻԱ 5